ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 2-րդ փ., 33, (0232) 3-67-91 , norerznka-village@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 45

## ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 12 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

Հաստատել համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 12 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Նոր Երզնկայի համայնքապետարանի աշխատակազմի 2018 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
2. <<Նոր Երզնկայի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
3. <<Նոր Երզնկայի մշակույթի տուն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
4. Նոր Երզնկա համայնքի վարչական տարածքում օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների 2018 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:
5. Համայնքի ղեկավարի 2018 թվականի վարձատրության չափը սահմանելու մասին:
6. Նոր Երզնկա համայնքի վարչական տարածքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների 2018 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:
7. Նոր Երզնկա համայնքի սեփականություն հանդիսացող հողերը աճուրդ վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՂԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ
2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ՏՈՎԱԿ
3. ՄԱՐԴՈՅԱՆ ՎՌԱՄ
4. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՋԱՆԻԲԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 2-րդ փ., 33, (0232) 3-67-91 , norerznka-village@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 46

## ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Հաստատել Կոտայքի մարզի Նոր Երզնկայի համայնքապետարանի աշխատակազմի 2018 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ *համաձայն հավելվածի.*
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ
2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԾՈՎԱԿ
3. ՄԱՐԴՈՅԱՆ ՎՌԱՄ
4. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՋԱՆԻԲԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված

05.12.20[illegible] թվականի թիվ 46 որոշման

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

## Նոր Երզնկայի համայնքապետարանի աշխատակազմի

Աշխատակիցների թվաքանակը՝ 11

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | համայնքապետարանի աշխատակազմ | Համայնքի ղեկավար | Քաղաքական | - | 1 | 330700 | | | 330700 |
| 2 | | Աշխատակազմի քարտուղար | Համայնքային ծառայության | 1.2-1 | 1 | 170000 | | 8500 | 178500 |
| 3 | | Գլխավոր մասնագետ | Համայնքային ծառայության | 2.3-1 | 1 | 165000 | | 8250 | 173250 |
| 4 | | Գլխավոր մասնագետ | Համայնքային ծառայության | 2.3-2 | 1 | 165000 | | 8250 | 173250 |
| 5 | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-1 | 1 | 130000 | | 3900 | 133900 |
| 6 | | 1-ին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2-1 | 1 | 125000 | | 3750 | 128750 |
| 7 | | 2-րդ կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.3-1 | 1 | 130000 | | 3900 | 133900 |
| 8 | | Հավաքարար | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 80000 | | | 80000 |
| 9 | | Վարորդ | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 100000 | | | 100000 |
| 10 | | պահակ | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 72751 | | | 72751 |
| 11 | | պահակ գիշերային | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 77904 | 23371 | | 101275 |
| 13 | **Ընդամենը** | | | | 11 | 1546355 | 23371 | 36550 | 1606276 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 2-րդ փ., 33, (0232) 3-67-91 , norerznka-village@meil.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 47

## <<ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդկետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Հաստատել <<ՆորԵրզնկայի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ *համաձայն հավելվածի.*
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՂԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ
2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԾՈՎԱԿ
3. ՄԱՐԴՈՅԱՆ ՎՌԱՄ
4. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱՑԻԿ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՋԱՆԻԲԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հաստատված

05.12.2017թվականի թիվ 47 որոշման

## ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

### Նոր Երզնկայի մանկապարտեզ ՀՈԱԿ

Աշխատակիցների թվաքանակը՝ 14

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | | 4 | 6 | 7 | 8 |
| 1 | Նոր Երզնկայի մանկապարտեզ ՀՈԱԿ | տնօրեն | | 1 | 105000 | | 105000 |
| 2 | | դաստիարակ | | 2 | 100000 | | 200000 |
| 3 | | երաժշտության մասնագետ | | 0.5 | 100000 | | 50000 |
| 4 | | դաստիարակի օգնական | | 2 | 84000 | | 168000 |
| | | գլխ.հաշվապահ | | 1 | 80000 | | 80000 |
| 6 | | բուժքույր | | 0.5 | 80000 | | 40000 |
| 7 | | լվացարար-հավաքարար | տեխնիկական սպասարկման | 1 | 72751 | | 72751 |
| 8 | | խոհարար | տեխնիկական սպասարկման | 1 | 77904 | | 77904 |
| 10 | | տնտեսվար | տեխնիկական սպասարկման | 0.5 | 77904 | | 38952 |
| 11 | | գիշերային պահակ | տեխնիկական սպասարկման | 1 | 77904 | 23371 | 101275 |
| | | **Ընդամենը** | | 10.5 | 855463 | 23371 | 933882 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
22, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 2-րդ փ., 33, (0232) 3-67-91 , norerznka-village@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 48

## <<ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետությանօրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Հաստատել <<Նոր Երզնկայի մշակույթի տուն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ *համաձայն հավելվածի.*
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ

2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԾՈՎԱԿ

3. ՄԱՐԴՈՅԱՆ ՎՌԱՄ

4. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ

5. ՄԱՀԱԿՅԱՆ ՋԱՆԻԲԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված

05.12.2017թվականի թիվ 48 որոշման

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

## Նոր Երզնկայի մշակույթի տուն ՀՈԱԿ

Աշխատակիցների թվաքանակը՝ 7

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Դրույք | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1 | Նոր Երզնկայի մշակույթի տուն ՀՈԱԿ | տնօրեն | | 1 | 1 | 90000 | | 90000 |
| 2 | | գրադարանավար | | 1 | 1 | 75000 | | 75000 |
| 3 | | հաշվապահ | | 1 | 0.5 | 75000 | | 37500 |
| 4 | | հավաքարար | տեխնիկական սպասարկման | 2 | 2 | 72751 | | 145502 |
| 5 | | գեղմավար | տեխնիկական սպասարկման | 1 | 0.5 | 77904 | | 38952 |
| 6 | | գիշերային պահակ | տեխնիկական սպասարկման | 1 | 1 | 72751 | 21825 | 94576 |
| | | **Ընդամենը** | | **7** | **7** | **463406** | **21825** | **481530** |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 2-րդ փ., 33, (0232) 3-67-91 , norerznka-village@mail.ru

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 49-Ն

### ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի և 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Սահմանել Նոր Երզնկա համայնքի վարչական տարածքում 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝ *համաձայն հավելված 1, 2-ի:*
Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ

2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԾՈՎԱԿ

3. ՄԱՐԴՈՅԱՆ ՎՌԱՄ

4. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ

5. ՍԱՀԱԿՅԱՆ ՋԱՆԻԲԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Հավելված 1*

*Նոր Երզնկա համայնքի ավագանու*

*2017թ. դեկտեմբերի 5-ի թիվ 49-Ն որոշման*

| Հ/հ | Տեղական տուրքերի տեսակները | Սահմանված դրույքաչափերը /դրամ/ |
|---|---|---|
| 1. | Նոր Երզնկա համայնքում տեղական տուրքերի դրույքաչափերը | |
| 1) | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվության չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ | |
| ա. | մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության, շենքերի և շինությունների համար՝ | 15000 |
| բ. | սույն կետի ա) ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝ | |
| | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ | 30.000 |
| | 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ | 50.000 |
| | 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ | 50.000 |
| | 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ | 100.000 |
| գ. | ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝ | |
| | մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ | 3000 |
| | 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ | 5000 |
| 2) | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ | |
| ա. | չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ | 3000 |
| բ. | բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն և բացի սույն կետի ա) ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով. | |
| գ. | նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը. | |
| 3) | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ | |

| | | |
|---|---|---|
| | օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ | 5000 |
| 4) | հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար սահմանվում է՝ երկու հարյուր հազար դրամ | 200.000 |
| 5) | խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է՝ վաթսուն հազար դրամ | 60000 |
| 6) | Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առ ու վաճառք իրականացնելու թույլտվության համար օրացուցային տարվա համար սահմանել ՝հիսուն հազար դրամ | 50000 |
| 7) | Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝ ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար | |
| ա. | ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար | |
| - | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև տաս հազար մեկ դրամ | 3500 |
| - | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար մեկ դրամից մինչև տասներեք հազար մեկ դրամ | 5250 |
| - | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամ մինչև քսան հազար մեկ դրամ | 6750 |
| - | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամ մինչև քսանհինգ հազար մեկ դրամ | 10250 |
| - | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամ մինչև քառասունհինգ հազար մեկ դրամ | 12750 |
| - | 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամից մինչև հարյուր մեկ հազար դրամ | 22750 |
| բ. | ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար | |
| - | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև տաս հազար մեկ դրամ | 3500 |
| - | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար մեկ դրամից մինչև տասներեք հազար մեկ դրամ | 5250 |
| - | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամ մինչև քսան հազար մեկ դրամ | 6750 |
| - | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամ մինչև քսանհինգ հազար մեկ դրամ | 10250 |
| - | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամ մինչև քառասունհինգ հազար մեկ դրամ | 12750 |
| - | 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 22750 |

| | | |
|---|---|---|
| | քառասունհինգ հազար մեկ դրամից մինչև հարյուր մեկ հազար դրամ | |
| 8) | Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի տարածքում «առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ 1 քմ. համար | 350 |
| 9) | Համայնքի վարչական տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է՝ | |
| ա. | առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազարից մինչև հիսուն հազար դրամ | 25.000 |
| բ. | հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազարից մինչև հարյուր հազար դրամ | 50.000 |
| գ | բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազարից մինչև հինգ հարյուր հազար դրամ | 200.000 |
| դ. | խաղատների համար՝ հինգ հարյուր հազարից մինչև մեկ միլիոն դրամ | 500.000 |
| ե. | շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազարից մինչև հինգ հարյուր հազար դրամ | 250.000 |
| զ. | վիճակախաղերի համար՝ հարյուր հազարից մինչև հարյուր հիսուն հազար դրամ | 100.000 |
| 10) | Համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝ | |
| ա. | Հիմնական շինությունների ներսում՝ | |
| - | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև հինգ հազար մեկ դրամ | 5.000 |
| - | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար մեկ դրամից մինչև տաս հազար մեկ դրամ | 10.000 |
| - | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տաս հազար մեկ դրամից մինչև տասնհինգ հազար մեկ դրամ | 15.000 |
| - | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ | 20.000 |
| - | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար մեկ դրամից մինչև երեսուն հազար մեկ դրամ | 30.000 |
| - | 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար մեկ դրամից մինչև հիսուն հազար մեկ դրամ | 50.000 |
| բ. | ոչ հիմնական շինությունների ներսում՝ | |
| - | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև հազար մեկ դրամ | 1.000 |
| - | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար մեկ դրամից մինչև երկու հազար մեկ դրամ | 2.000 |
| - | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար մեկ դրամից մինչև չորս հազար մեկ դրամ | 4.000 |
| - | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար մեկ դրամից մինչև ութ հազար մեկ դրամ | 8.000 |
| - | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար մեկ դրամից մինչև տասնհինգ հազար մեկ դրամ | 15.000 |
| - | 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ | 25.000 |
| 11) | Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար (բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս) մեկ քառակուսի մետրի համար՝ | |
| ա. | ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ | 2000 |

| | | |
|---|---|---|
| բ. | թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ | 3500 |
| գ. | սոցիալական գովազդի համար՝ | 0 |
| դ. | այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ | 1500 |
| ե. | դատարկ գովազդային վահանակների համար համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով. | 375 |
| զ. | եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի՝ չափով. | 150 |
| 12) | Համայնքի խորհրդանիշերը, (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ | 100000 |
| 13) | Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների, միկրոավտոբուսների) ծառայության իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տաս հազար դրամ | 10000 |
| 14) | Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ. | 500000 |
| 15) | Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ | |
| ա. | 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ. | 2.500.000 |
| բ. | 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ. | 5.000.000 |
| գ. | 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ | 7.000.000 |
| դ. | 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տաս միլիոն դրամ | 10.000.000 |
| 2. | Սույն հավելվածի 1-ին մասի 7-րդ կետի ա.) բ.) ենթակետերում դրույքաչափերը հաշվարկվել են 0,5 գործակցի կիրառմամբ: | |

Հավելված 2

Նոր Երզնկա համայնքի ավագանու

2017թ. դեկտեմբերի 5-ի թիվ 49-Ն որոշման

## Նոր Երզնկա համայնքի վարչական տարածքում 2018 թվականի տեղական վճարների դրույքաչափերը սահմանելու մասին

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Նոր Երզնկա համայնքում սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը. | | |
| 1) | Համայնքի վարչական տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | | 5000 |
| 2) | Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բայց շինարարական աշխատանքները իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը, ավարտական ակտով փաստագրման, ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ | | 5000 |
| 3) | Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ | | 5000 |
| 4) | Համայնքի սեփականության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի <<փաթեթի>> նախապատրաստման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ | | 35.000 |
| 5) | Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ | | 5000 |
| 6) | Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ | | 500 |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
22, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 2-րդ փ., 33, (0232) 3-67-91 , norerznka-village@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 50

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով
*համայնքի ավագանին որոշում է.*

1. Համայնքի ղեկավարի 2018 թվականի վարձատրության չափը սահմանել ամսական 330700 (երեք հարյուր երեսուն հազար յոթ հարյուր) դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ
2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԾՈՎԱԿ
3. ՄԱՐԴՈՅԱՆ ՎՌԱՄ
4. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՋԱՆԻԲԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
22, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 2-րդ փ., 33, (0232) 3-67-91 , norerznka-village@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 51-Ն

## ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ, 20-րդ կետերի պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Սահմանել Նոր Երզնկա համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների 2018 թվականի դրույքաչափերը
1) Ֆիզիկական անձանց և այլ կազմակերպությունների կողմից համայնքի հանդիսությունների սրահը վարձակալելու համար տեղական վճար սահմանել մեկ օրվա համար՝ 15000 (տասնհինգ հազար) դրամ:
2) <<Նոր Երզնկայի մշակույթի տուն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում գործող պարի խմբակի ամսական ուսման վճար սահմանել՝ 2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ:
3) <<Նոր Երզնկայի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության ամսական ծնողական վճարի չափ սահմանել՝ 6000(վեց հազար) դրամ:
4) Սահմանել՝ Նոր Երզնկա համայնքի տարածքում 2018 թվականի համար աղբահանության դիմաց գանձվող տեղական վճարների դրույքաչափերը՝ *համաձայն հավելվածի:*
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ

2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԾՈՎԱԿ

3. ՄԱՐԴՈՅԱՆ ՎՌԱՄ

4. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐՎԱՆԴ

5. ՍԱՀԱԿՅԱՆ ՋԱՆԻԲԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Հավելված 1*
*Նոր Երզնկա համայնքի ավագանու*
*2017 թվականի դեկտեմբերի 5-ի*
*N 51-Ն որոշման*

## ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

| N | Աղբահանության վճարի տեսակները | Դրույքաչափերը (դրամ) |
|---|---|---|
| 1. | Կենցաղային աղբի համար՝ | |
| 1) | անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական | 150 |
| 2) | բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ 1 քմ մակերեսի համար ամսական | 4 |
| 2. | Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ | |
| 1) | ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար | 600 |
| 2) | ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար | 2 000 |

3. Սույն հավելվածի 2-րդ կետով նախատեսված աղբի ծավալը կամ զանգվածը որոշելու (պարզելու) անհնարինության դեպքում, այդ թվում՝ տեխնիկական, աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է հետևյալ ամսական դրույքաչափերով՝

| N | Աղբահանության վճարի տեսակները | Դրույքաչափերը (դրամ) |
|---|---|---|
| 1) | Առևտրի, կենցաղի, սպասարկման օբյեկտների համար | |
| 1.1) | մինչև 6 քմ սպասարկման տարածք ունեցող օբյեկտների համար ամսական | 120 |
| 1.2) | մինչև 20 քմ սպասարկման տարածք ունեցող օբյեկտների համար ամսական | 200 |
| 1.3) | մինչև 50 քմ սպասարկման տարածք ունեցող օբյեկտների համար ամսական | 500 |
| 1.4) | 51 քմ և ավելի սպասարկման տարածք ունեցող օբյեկտների համար 6 000 դրամ և 50 քմ-ից ավելի յուրաքանչյուր քմ-ի համար ամսական | 15 |
| 2) | Հասարակական սննդի օբյեկտների համար՝ | |
| 2.1) | մինչև 20 քմ սպասարկման տարածք ունեցող օբյեկտների համար ամսական | 600 |
| 2.2) | մինչև 50 քմ սպասարկման տարածք ունեցող օբյեկտների համար ամսական | 1 000 |
| 2.3) | 51 քմ և ավելի սպասարկման տարածք ունեցող օբյեկտների համար՝ 6 000 դրամ և 50 քմ-ից ավելի յուրաքանչյուր քմ-ի համար ամսական | 30 |
| 3) | Պտուղ բանջարեղենի խանութների համար՝ | |
| 3.1) | մինչև 20 քմ սպասարկման տարածք ունեցող օբյեկտների համար ամսական | 600 |
| 3.2) | մինչև 50 քմ սպասարկման տարածք ունեցող օբյեկտների համար ամսական | 1 200 |
| 3.3) | 51 քմ և ավելի սպասարկման տարածք ունեցող օբյեկտների համար՝ 6 000 դրամ և 50 քմ-ից ավելի յուրաքանչյուր քմ-ի համար ամսական | 30 |

4. Ոչ առևտրային կազմակերպությունների համար կիրառվում է սույն հավելվածի աղյուսակի 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերի նկատմամբ 0.8 գործակիցը:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 2-րդ փ., 33, (0232) 3-67-91 , norerznka-village@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 52

## ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝
***համայնքի ավագանին որոշում է.***

1. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահողերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել՝
***համաձայն հավելվածի:***

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ
2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ՇՈՎԱԿ
3. ՄԱՐԴՈՅԱՆ ՎՌԱՄ
4. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՋԱՆԻԲԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Հավելված*
*Լոռի Բերդի համայնքի ավագանու*
*05.12.2017թ. N 52 որոշման*

| Հ/հ | Հողատեսքը | Ծածկագիրը | Մակերեսը /հա/ | Կադաստրային արժեք % | Կարգը | Աճուրդի մեկնարկային գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Գյուղ. նշանակության վարելահող | 0109-0061 | 0,82105 | 100 | 5 | 299683 |
| 2. | Գյուղ. նշանակության վարելահող | 0108-0122 | 18,27107 | 50 | 5 | 3334470 |
| 3. | Գյուղ. նշանակության վարելահող<br>այլ հողատեսք | 0108-0123 | 17,71658<br>0,05635 | 50 | 5 | 3235178 |